
ՇԵՔՍՊԻՐԻ «ՕԹԵԼԼՈՆ» ԿԱՆԱԴԱՀԱՅ ԲԵՄՈՒՄ

ԲԵՔԱՐՅԱՆ Ա. Ա.

Հայերը Կանադայում բնակություն հաստատելու սկզբից նեթ, սկսած 1900-ական թվականներից, եռանդուն կերպով ձեռնամուխ են եղել հանդեսների ու հավաքույթների կազմակերպմանն ու անցկացմանը՝ ասմունքով, երգերով, ելույթներով, թատերական փորձերով և հանպատրաստից ներկայացումներով: Նրանց նպատակը համայնքի հայերին համախմբելն էր, ինչպես նաև հանգանակություններ կատարել՝ ի նպաստ հայ տարագիրների, դպրոցների և հիվանդանոցների: Չնայած այդ հանդեսների ու հավաքույթների ընթացքում բեմադրված ներկայացումները չունեին աչքի ընկնող գեղարվեստական արժանիքներ, այնուամենայնիվ, անժխտելի է այն փաստը, որ դրանք զգալի դեր են ունեցել հայ երիտասարդ սերնդի հայեցի դաստիարակության, կանադահայ գաղթօջախում ազգի գոյապահպանման գործում և ծառայել են իրենց հիմնական նպատակին՝ համախմբել Կանադայի հայաշատ քաղաքների հայերին, նրանց ծանոթացնել ու կապել հայ թատրոնին: Հենց Կանադայի հայաշատ քաղաքներում կատարվող թատերական փորձերը օժանդակեցին հետագայում ավելի կայուն ազգապահպան ծրագրեր մշակելու և իրագործելու գործում: Հենց այդ փորձերի հիման վրա էր, որ հետագայում ստեղծվել ու հաջողությամբ գործել են մի շարք հայ թատերախմբեր:

Սակայն, անհրաժեշտ է նշել, որ մինչև 1970-ական թվականների կեսերը կանադահայ գաղթօջախում գործող թատերախմբերը հիմնականում ունեին սիրողական բնույթ, որոնք ղեկավարում էին սիրող բեմադրիչները: Ինչպես հայտնի է, Լիբանանում տիրող քաղաքացիական պատերազմի ծանր իրադրությունը հարկադրեց շատ հայերի, այդ թվում՝ բազմաթիվ արվեստագետների, 1970-ական թվականների երկրորդ կեսին արտագաղթել ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա, Ավստրալիա և այլ երկրներ: Այդ իսկ պատճառով էլ 1976-ին Կանադայում հաստատվեց Լիբանանի թատերական կյանքում նշանակալի դեր կատարող, փորձառու թատերական գործիչ, տարբեր երկրների բեմերի վրա տարբեր լեզուներով իր թատերական տաղանդն ու կարողությունն ի հայտ բերած Պերճ Ֆազլյանը: Նա, հիմնելով Մոնրեալի Թեքեյան մշակութային միության «Հայ բեմ» թատերախումբը, նոր լիցք, արվեստի բարձր որակ ու նոր մակարդակ հաղորդեց կանադահայ թատերական կյանքին:

«Հայ բեմ» թատերախումբը Պ. Ֆազլյանի բեմադրությամբ ներկայացրել է Ն. Գոգոլի «Ամուսնություն», Մոլիերի «Ազահը», Ջ. Փրիսլիի «Ոստիկանապետ մը եկաւ», Պ. Ֆազլյանի «Անպատանք դիակներ», Ռ. Կյուրիկի «Պարան կը ծախեն», Ռ. Թոմայի «Ծուղակ», Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար», Կ. Գոլդոնիի «Երկու տիրոջ ծառա», Վ. Շեքսպիրի «Օթելլո» և այլ

թատերախաղեր: Թատերախումբը հյուրախաղերով հանդես է եկել Կանադայի և ԱՄՆ-ի գրեթե բոլոր քաղաքներում, ինչպես նաև Լոնդոնում:

Հատկապես կարևոր և առանձնակի նշանակություն ունեցող երևույթ էր կանադահայ գաղթօջախում Շեքսպիրի «Օթելլո» ներկայացումը, քանի որ, ինչպես նշում է հայ մեծանուն բանաստեղծ Հովհ. Թումանյանը իր «Համլետ», «Պրերգություն Շեքսպիրի» (1896) բավական ծավալուն վերլուծական-քննական հոդվածում, «Շեքսպիրը դարձել է մի չափ ազգերի զարգացման աստիճանն որոշելու համար: Եթե մի ժողովուրդ նրան չի թարգմանում, կնշանակի տգետ է, եթե չի հասկանում, կնշանակի տհաս է, եթե մի լեզու նրա վրա չի գալիս, կնշանակի տկար է: Այս տեսակետից մենք կարող ենք ասել, թե հառաջադիմություն ենք արել...»¹: Իրոք, դեռևս XIX դարի առաջին կեսին հայ մամուլում հիշատակվել են Շեքսպիրի ստեղծագործությունները, թարգմանվել առանձին տողեր, իսկ 1853-ին «Արփի Արարատյան» հանդեսում տպագրվել է «Կատակերգութիւն սխալանաց» երկը (թարգմանիչ՝ Կ. Տետեյան): Հետագայում Շեքսպիր են թարգմանել բազմաթիվ այլ թարգմանիչներ, որոնց մեջ իր ուրույն տեղն ունի Հովհ. Մասեհյանը, որի թարգմանությունների ընդարձակ առաջաբանները բացառիկ տեղ են գրավում: Շեքսպիրի դրամատիկական երկերի հայերեն բեմադրություններն սկսվել են 1866-ից և շարունակվում են առ այսօր:

Եվ այսպես, 1984 թ. փետրվարին Կանադայում առաջին անգամ հայերեն Մոնրեալի Թեքեյան մշակութային միության «Հայ բեմ» թատերախումբը Պերժ Ֆազլյանի բեմադրությամբ ներկայացրեց Վ. Շեքսպիրի «Օթելլո» ողբերգությունը: Ներկայացումները կայացել են ՀԲԸՄ «Ալեք Մանուկյան» ամենօրյա վարժարանի «Կոնճյան» սրահում՝ փետրվարի վերջին երկու շաբաթ և կիրակի օրերին՝ 18-ին, 19-ին և 25-26-ին:

Դա, իրոք, բացառիկ նշանակություն ունեցող իրողություն էր և հանդուգն նախաձեռնություն, քանի որ իր բոլոր բարդություններով հանդերձ, «Օթելլոն» Շեքսպիրի ամենաշատ ներկայացվող թատերգությունն է հայ բեմում, ընդ որում, այն բեմադրել են այնպիսի ականավոր բեմադրիչներ, ինչպիսիք են Արմեն Գուլակյանն ու Վարդան Աճեմյանը, իսկ Օթելլոյի կերպարը մարմնավորել են քառասունից ավելի հայ դերասաններ, այդ թվում՝ հայ բեմի այնպիսի հսկաներ, ինչպիսիք են հայ առաջին Օթելլո Գևորգ Չմշկյանը (1867), անկրկնելի Պետրոս Ադամյանն ու Վահրամ Փափազյանը, Հրաչյա Ներսիսյանն ու Գուրգեն Ջանիբեկյանը, Հովհաննես Ջարիֆյանն ու Հովհաննես Աբելյանը և շատ ուրիշներ, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է մեկնաբանել Օթելլոյի հոգեվիճակն ու վարքագիծը:

«Թեքեյան» մշակութային միության «Հայ բեմ» թատերախմբի այս հանդուգն քայլը պսակվեց հաղթանակով. «Օթելլո» ողբերգության բեմադրության և խաղարկության բարձր մակարդակը մի նոր էջ բացեց սփյուռքահայ թատրոնի

¹ Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, 10 հատորով, հ. 6, Ե., 1994, էջ 53-54:

² Տե՛ս Հայկական Համառոտ Հանրագիտարան, 4 հատորով, հ. 4, Ե., 2003, էջ 69:

պատմության մեջ: Մամուլից քաղված տեղեկությունները վկայում են, որ թե՛ կանադահայ, թե՛ օտար հասարակությունը մեծ հետաքրքրությամբ է ունկնդրել այդ ներկայացումները: Նախ, հանդիսատեսների թիվը եղել է ակնկալվածից շատ ավելի մեծ: Երկրորդ, ներկայացման հաջողությանը նպաստել է նաև այն հանգամանքը, որ Պ. Ֆազլյանը, օգտագործելով Հովհ. Մասեհյանի անգուգական թարգմանությունը, դերասանների, ինչո՞ւ չէ, նաև ունկնդիրների աշխատանքը թեթևացնելու և դյուրացնելու համար այն փոքր փոփոխություններով արևելահայերենից վերածել էր արևմտահայերենի: Բհարկե, դրանից Մասեհյանի թարգմանությունը որոշ չափով տուժել էր:

Ինչպես հայտնի է, Շեքսպիրի շատ ողբերգություններում գլխավոր հերոսների անփառունակ անկումը և վախճանը ոչ թե արտաքին ուժերի հետ հակասության հետևանք է, այլ իրենց բնավորության նկարագրի, որն է բացասական գծի դրսևորման և զարգացման արդյունք: Այսպես, «Մակբեթում» ի հայտ է գալիս փառասիրության կործանարար ազդեցությունը, «Լիր արքայում»՝ եսակենտրոնությունը, «Կորիդուանուսում»՝ հպարտությունը և, վերջապես, «Օթելլոյում»՝ կասկածամտությունը: Այս բոլոր ողբերգությունների ավարտին գլխավոր հերոսը, անդրադառնալով սեփական վարվելակերպին, գիտակցում և զգում է, որ միայն ինքն է իր տառապանքի և կործանման պատճառը և վերջ է տալիս իր կյանքին:

Պ. Ֆազլյանն «Օթելլոյի» դերում կարողացել է ճշգրտորեն մարմնավորել մավրին, որը կարողանում է բանականորեն ու սառնասրտորեն քննարկել իրադրությունները և կայացնել համապատասխան վճիռներ: Սակայն նրա հիմնական թերությունն անսահման խանդն է, որն աստիճանաբար նրա մեջ արթնացնում է Ֆազոն: Պ. Ֆազլյանը հաջողությամբ ներկայացնում է Օթելլոյի անհատականության աստիճանական փոխակերպումը դեպի վատը, որը նախանձի և ատելության զգացումների հարաճուն զարգացման արդյունք է: Ինչպես նշում է մամուլը, Ֆազլյանը կարողացել է «հանդիսատեսին առջև բանալ Օթելլոյի հոգեբանությունը, նախ որպես իր կինը պաշտոդ ամուսին մը, ապա կասկածներէ հետզհետէ աւելի ու աւելի տանջուող անգոր մարդ մը, որ աւելի վերջ նախանձի ճիրաններուն մէջ կը գալարի ամբողջովին գերի՝ պոռթկացող ու անսանձ ժխտական զգացումներու: Ֆազլեան-Օթելլոյի բնագդային պոռթկումները համոզիչ են ... եւ մասնաւորաբար ոճիրին տեսարանը իսկապէս ողբերգական եւ տպաւորիչ էր»³:

Նշենք, որ բացի Պ. Ֆազլյանից, որը կատարում էր Օթելլոյի դժվարին դերը, մյուս դերասանները սիրողներ էին, որոնցից ոմանք առաջին անգամ էին բեմ բարձրանում: Չնայած դրան, ինչպես նշում է մամուլը, «դերասաններու առողջանութիւնը անթերի էր, բեմին վրայ անոնց ներկայութիւնն ու շարժումները՝ ինքնավստահ, ընդհանրապէս բնական, առանց աւելորդ սեթեւեթի»⁴, իսկ «գլխաւոր դերակատարներ՝ Պերճ Ֆազլեան (Օթելլո),

³ «Օթելլո», «Հայ բեմ» եւ հաղթական խոյանք (Ապագայ, Մոնրեալ, 12 III. 1984):

⁴ Ա. Գ., Թ. Մ. Միութեան «Հայ բեմ»-ը կը ներկայացնէ («Օթելլո»-ն, Պայքար, Բոստոն, 3. III. 1984):

Վարսենիկ Նազոյեան (Տեգտեմոնա) եւ Աբել Վարդիվառեան (Եակօ) գերազանցեցին իրենց արուեստը, ապրելով եւ ապրեցնելով իրենց ներկայացուցած հերոսները»⁵:

Ներկայացման բեմադրիչ Պ. Ֆազլյանը իր խոր հետաքրքրության, միջազգային և հայաստանյան թատերական արվեստի վերաբերյալ քաջատեղյակության և տասնամյակների փորձառության շնորհիվ բեմադրության հետ կապված զանազան խնդիրների կարողացել է տալ շատ հաջող, յուրահատուկ և արդիական լուծումներ, ինչպես նաև աչքի է ընկել «իր բացառիկ կերպով արտայայտիչ դիմախաղով, ձայնի բազմաշերտ ելեւէջներով, մատներու շարժումներով, մարմնի իւրաքանչիւր մկանի պրկումներով՝ Ֆազլեան-Օթելլոն հանդիսատեսին աչքերուն առջեւ ձեւափոխուեցաւ, առաջին տեսարանի խրոխտ, ինքնավստահ, յանդուգն եւ սերով խայտացող ծովագնաց ռազմիկը կամաց կամաց կրծուեցաւ նախանձէն ու կիրքէն, հոգին փակեց տրամաբանութեան եւ ողջախոհութեան առջեւ...»⁶: Այս ամբողջ ձևազեղծումը, մարդկային հոգու այդ սարսափելի փլուզումը, որ Շեքսպիրի հանձարի բարձրակետն է, Պ. Ֆազլյանը ներկայացրել է ինքնատիպ և բարձր արվեստով, «գոր քիչ անգամ մեր բեմերուն վրայ տեսնելու երջանկությւնը կ'ունենանք»⁷:

Միաժամանակ պետք է արձանագրել, որ ինչքան էլ Պ. Ֆազլյանը քաջատեղյակ լիներ հայ բեմում իրենից առաջ մեկնաբանված օթելլոներին, ինչքան էլ Օթելլոյի կերպարը մեկնաբաներ համոզիչ ու անթերի, հավանաբար, ներկայացումը չէր ունենա այդպիսի հաջողություն, և հանդիսատեսը մեծ խանդավառությամբ չէր ընդունի այն, եթե «Հայ բեմ» թատերախմբի մշտական դերակատար Աբել Վարդիվառյանը, որին Պ. Ֆազլյանը «թրծեց ... ութը տարիներ է ի վեր»⁸, ինքնավստահություն և այդ դերին ներկայացվող պահանջներին համապատասխանող բարձր կարողություն չցուցաբերեր ճշգրիտ կերպով մեկնաբանելու Շեքսպիրի ստեղծած բարդ կերպարներից մեկին՝ Յագոյին: Ըջգրտորեն վեր հանելով Յագոյի հոգեբանության առանձնահատկությունները՝ Ա. Վարդիվառյանը կարողացել է ապահովել անհատական բացառիկ հաղթանակ և նպաստել ներկայացման ընդհանուր հաջողությանը: Նրա մարմնավորած Յագոն «դասական դարձած Եակօներէն տարբեր էր, ինչ որ ինքնատիպ կը դարձներ տիպարը: Բազմաթիւ բեմադրիչներ, նկատի ունենալով Եակօյի նկարագրի դաժանութիւնը, դերը յանձնած են արտաքինով տհաճ դերասաններու. բայց Վարդիվառեանի ներկայանալի արտաքինը հակասութիւն մը ստեղծելով

⁵ ԹՄՄ-ի «Հայ բեմ»-ին նոր նուաճումը. «Օթելլո»-ն առաջին անգամ ըլլալով հայերէնով կը ներկայացուի Գանատայի մէջ, (Ապագայ, 27. II. 1984):

⁶ Ա. Գ., Թ. Մ. Միութեան «Հայ բեմ»-ը կը ներկայացնէ «Օթելլո»-ն (Պայքար, Բոստոն, 3. III. 1984):

⁷ Նույն տեղում:

⁸ Մրբուհի Շաքարեան-Տէր Օհաննէսեան, Երբ լեզուն արգելք չէ (Ապագայ, 12. III. 1984):

Եակոյի ներքին դաժանութեան, տիպարը կը դարձնէր աւելի ատելի»⁹: Ա. Վարդիվառյանի մարմնավորած Յագոն իր դաժան գործողությունների իրականացման մեջ «անկեղծ» էր. նա «կը քանդէր շուրջը, պարզապէս քանդելու հաճոյքին համար»¹⁰, «իր կարողութիւնները ի գործ կը դնէ չարիք հասցնելու համար ուրիշին եւ դեւային հաճոյք մը կը զգայ դիմացինին տառապանքը տեսնելով»¹¹:

Շեքսպիրի կերտած կանանց կերպարների մեջ իր առանձնահատուկ և ուրույն տեղն ունի Դեզդեմոնան, քանի որ ճակատագրի բերումով անխուսափելի է դառնում նրա նահատակվելու փաստը: Բեմադրիչ Պ. Ֆալլանից պահանջվում էր մեծ պատասխանատվություն և խիզախություն, որպէսզի վճիռ կայացներ Դեզդեմոնայի դժկարին դերը վստահել մի երիտասարդ սկսնակ դերասանուհու, որն առաջին անգամ է բեմ բարձրանում: Սակայն, ինչպէս նշում են ականատեսները, Վարսենիկ Նազոյանը, հետևելով բեմադրիչի ցուցումներին, իր անկեղծ ու հուզիչ խաղով հաճելի անակնկալ է մատուցել հանդիսատեսներին: Նազոյան-Դեզդեմոնան ցուցադրել է իր անկեղծ սերը Օթելլոյի նկատմամբ, դրսևորել է այդ սերը տրամաբանորեն, և «երբ Նազոյան-Տեգտեմոնան խեղդամահ կ'իյնար, կը յստականար այն պարագան, թէ Տեգտեմոնան փաստելու համար իր հավատարմութիւնն ու սերը, ուրիշ միջոց չունէր, բացի ինքնագոհութենէ»¹²:

Էմիլիայի դերակատարուհի Սիրվարդ Ֆալլանը հետևել է Շեքսպիրի ողբերգության մեջ այդ կերպարի տրամաբանական զարգացման ընթացքին. մինչև վերջին տեսարանը նա կարծես թէ դուրս է մնացել բեմի վրա կատարվող ողբերգական իրադարձություններից և հանդես է եկել որպէս մի լուռ վկա, սակայն վերջին արարում միայն նա է հանդգնում կատաղած ու վայրագ Օթելլոյին ասել դառն ճշմարտությունը: Ս. Ֆալլանն իր փորձառութեամբ, բացառիկ խաղով ու թատերական կարողությամբ կարողացել է ճշգրիտ մեկնաբանել Էմիլիայի կերպարը, վերջին արարում պահպանել լարվածությունը և ստեղծել այն ողբերգական մթնոլորտը, որը ներկայացումը հասցնում է իր գագաթնակետին:

Հաջող են հանդես եկել նաև Հակոբ Թոշիկյանը (Ռոդրիգո), Հակոբ Գրլըճյանը (Կասիո) և Օննիկ Գալուստյանը (Բրաբանցիո): Ինչպէս նշում է մամուլը, «Եակոյի ձիրաններուն մէջ» ընկած «Թոշիկեանի Ռոտերիկօն այնքա՛ն ճշմարիտ ու համոզիչ էր, որ թերեւս դժուար ըլլայ գտնել, հայ թատրոնի «Օթելլօ»-ներու մէջ, նոյնքան համոզիչ Ռոտերիկօ մը»¹³: Շեքսպիրի նախադասությունների բանալին կարծես թէ գտնվում էր Հ. Թոշիկյանի

⁹ Ա. Ա., «Օթելլօ»-ի յաջող ներկայացումը մեծ խանդավառութիւն ստեղծեց, նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ «Օթելլօ», «Հայ բեմ» եւ հաղթական խոյանք (Ապագայ, 12. III. 1984):

¹² Ա. Ա., «Օթելլօ»-ի յաջող ներկայացումը մեծ խանդավառութիւն ստեղծեց, նույն տեղում:

¹³ Նույն տեղում:

«գերարտայայտիչ դեմքին վրայ, նոյնիսկ երբ ան լուռ է, եւ սակայն, մտիկ կ'ընէ իր խօսակիցներուն»¹⁴։ Իսկ Հակոբ Գրլըճյանը «Քասսիօյի տիպարը ձերբազատած էր կնամեծարութենէ, եւ ասոր փոխարէն՝ շեշտած էր տիպարին կրքոտ ու ջղային բնավորութիւնը»¹⁵, այսինքն՝ Հ. Գրլըճյանը Կասիօյի կերպարը մեկնաբանել է յուրովի և նոր ձևով։ Օննիկ Գալուստյանն ինքնավստահ և հարազատորեն է ներկայացրել Բրաբանցիոյի՝ չափազանց ավանդապահ և բռնակալ հոր կերպարը, որը չի կարողացել հասկանալ իր աղջկան, ինչի հետևանքով էլ նրա և Դեզդեմոնայի միջև անհաղորդ մթնոլորտ է ստեղծվել։

Մնացած դերերով հանդես են եկել Վահան Շաքարյանը (Վենետիկի դուքս), Լենա Խաչիկյանը (Բիանքա), Սարո Թոշիկյանը (Գրացիանո), Բաֆֆի Մղեսայանը (Լոդովիկո), Արա Տեմիրճյանը (Մոնտանո) և ուրիշներ, որոնք ներդաշնակորեն միաձուլվել են «Հայ բեմ» թատերախմբի ներկայացրած «Օթելլո» ողբերգության մեջ և նպաստել ներկայացման հաջողությանը։

Բեմի հարդարանքի պատասխանատուներ Վահե Էմմիյանը և Արա Փիլիպոսյանն իրենց առջև դրված խնդիրը լուծել են ըմբռնումով՝ արդիականորեն, գուսպ մոտեցումով, կարողացել են պարզագույն սարքավորումներով ստեղծել շեքսպիրյան հարազատ մթնոլորտ և տեսարանների արագ փոփոխությամբ նպաստել ներկայացման հաջողությանը։ Ներկայացման զգեստավորման հղացող և պատրաստող Միրվարդ Ֆազլյանն ընդհանրապես խուսափել է վառ ու պայծառ գույներից և առավել մուգ երանգների համադրությամբ ամբողջացրել է շեքսպիրյան ողբերգական աշխարհը։ Իսկ վերջին գործողությունում Դեզդեմոնայի անկողնու և զգեստի շրջուցիչ սպիտակությունը, որը ողբերգության ընդհանուր մթնոլորտի նկատմամբ ստեղծել է հակասություն, միայն էլ ավելի ողբերգական է դարձրել տեսարանը։

Այսպիսով, բեմի հարդարանքի, լույսի, երաժշտության և զգեստավորման համադրության, դերասանների բարձր մակարդակի խաղի, Պերճ Ֆազլյանի բարձրարվեստ, հնարամիտ և հմուտ բեմադրության շնորհիվ «Թեքեյան» մշակութային միության «Հայ բեմ» թատերախումբը Շեքսպիրի «Օթելլո» ողբերգության «չորս գիշերներու ներկայացումները գեղարուեստական վայելքի մը վերածեց. վայելք մը, որ մոնթրէալահայ արուեստասէր հասարակութիւն ընկալեց յօտընկայս ծափահարութիւններով»¹⁶։

Ընդհանուր առմամբ, արձանագրենք, որ թատերական դժվարին ճանապարհ անցած բեմադրիչ Պ. Ֆազլյանին քրտնաջան աշխատանքի շնորհիվ հաջողվել է կանադահայ գաղթօջախի դժվարին և սուղ պայմաններում ստեղծել մի միատարր խումբ և այն հասցնել այնպիսի

¹⁴ **Մարուխի Շաքարեան-Տէր Օհաննէսեան**, Երբ լեզուն արգելք չէ, նույն տեղում։

¹⁵ Ա. Ա., «Օթելլո»-ի յաջող ներկայացումը մեծ խանդավառություն ստեղծեց, նույն տեղում։

¹⁶ Նույն տեղում։

մակարդակի, որն ավելի մոտ է արհեստավարժ թատերախմբի, քան սիրողական:

Դեռևս «Օթելլո» ողբերգության բեմադրության նախապատրաստական փուլում, փորձերի ժամանակ բոլոր դերակատարները մեծ լարվածությամբ հետևել են բեմադրիչ Պ. Ֆազլյանի խստապահանջ ցուցումներին, «որ ամեն տեղ է, ամեն վայրկեան, ձկուն, ուժական, կայծկլտուն երեւակայութեամբ ու ... թատերական կեանքի մը պատկառելի քառասուն տարիներու փորձառութեամբ»¹⁷: Այդ մասին նշում են նաև իրենք՝ դերասանները. «Չատ գոհ եմ, որ «Հայ բեմ» թատերախումբին մէջ փորձառութիւն ձեռք կը ձգեմ, շատ բան կը պարտիմ Պերճ Ֆազլեանի խստապահանջութեան» (Հակոբ Թոշիկյան), «Կի հիանամ բեմադրիչիս, Պերճին, շա՛տ խորաթափանց բժախնդրութեան վրայ, իր ցուցմունքները մի՛շտ ալ տեղին կը գտնեմ» (Օննիկ Գալուստյան), «յն դերասանը, որ իր մէջ ունի արդէն, թատերական խառնուածք եւ խմոր, շատ լաւ կերպով կը կոփուի Պերճ Ֆազլեանի ձեռքերուն մէջ: Ու իր մեծագոյն առաւելութիւններէն մէկն ալ երիտասարդ խոստումնալից դերասաններու վրայ աշխատիլն է, եւ միշտ ալ յաջողած է» և այլն:

«Օթելլո» ողբերգության առաջին ներկայացումից հետո «Թեքեյան» մշակութային միության նախագահ Արշավիր Կոնճյանը, շնորհավորելով և շնորհակալություն հայտնելով թատերախմբի անդամներին, նշում է նաև, «թէ «Օթելլո»-ի ներկայացումով «Հայ բեմ»-ը իր զագաթնակէտին հասած կ'ըլլայ», և ավելացնում. «որոշւած է առաջիկայ տարուան ընթացքին պատշաճ կերպով նշել վաստակաւոր արուեստագէտ Պերճ Ֆազլեանի թատերական գործունէութեան 40-ամեայ ծառայութիւնը»¹⁸:

Առաջին ներկայացմանը ներկա է եղել նաև Կանադայի ազգային թատրոնի (École Nationale de Théâtre du Canada) ընդհանուր տնօրէն Ժան-Լուի Ռուն, որի համար հայերենը բնավ արգելք չի եղել ուշադրությամբ, արտահայտիչ տպավորությամբ, գիտակից մոտեցումով և հաճույքով հետևելու Պերճ Ֆազլյանի բեմադրած «Օթելլո» ներկայացմանը: Բնչպես նշում է զարմանքի և հիացման ապրումներով համակված Ժան-Լուի Ռուն, «...հաճելի անակնկալի մը առջեւ գտայ ես ինքս, մինչ այն տպաւորութեան տակ էի թէ՛ այս գիշեր կուգամ քաջալերելու սիրողներու խումբ մը, սակայն, կը տեսնեմ, թէ միա՛յն շնորհաւորական խոսքեր ունիմ ըսելիք»¹⁹: Մեծ հաճույքով խոսելով Ֆազլյան-արվեստագետի մասին, նշում է. «Պերժը (իր հնչումով) յիշաւի սխրագործութիւն մը կատարած է, ու ես կը կարծեմ, թէ ան յաջողած է: ... Իսկ ինչ որ մասնաւորապէս կը տպաւորէ զիս, արդիական այս բեմին ընծայած դիրտութիւններու եւ մանաւանդ զայն լաւագոյնս օգտագործելու իր արուեստն

¹⁷ **Մրբունի Շաքարեան-Տէր Օհաննէսեան**, Թատերական գործունէության մը նոր հանգրուանի սեմին (Ապագայ, 13. II. 1984):

¹⁸ ԹՄՄ-ի «Հայ բեմ»-ին նոր նուաճումը. «Օթելլո»-ն առաջին անգամ ըլլալով հայերէնով կը ներկայացուի Գանատայի մէջ (Ապագայ, 27. II. 1984):

¹⁹ **Մրբունի Շաքարեան-Տէր Օհաննէսեան**, Երբ լեզուն արգելք չէ:

ու բեմայարդարման իր «գիտեր»-ն են...», և ավելացնում՝ «... մենք իրարու հետ ունեցած ենք երկա՛ր խօսակցություններ միջազգային թատրոնի խնդիրներու շուրջ, եւ կասկած չկայ, որ ճարտասան մըն է ան: Բսկ այսօր, երբ առաջին անգամ ըլլալով, կը տեսնեմ զինք բեմին վրայ, ուղղակի հմայուած եմ իր բեմային ներկայութեամբ»²⁰:

Մոնրեալում կայացած Շեքսպիրի «Օթելլո» ողբերգության ներկայացումներին անդրադարձել են ոչ միայն կանադահայ, այլև սփյուռքահայ այլ պարբերականներ, որոնք նույնպես նշել են ինչպես Պ. Ֆազլյանի, այնպես էլ սիրող դերասանների արհեստավարժ խաղը: Այսպես, օրինակ, ինչպես նշում է մամուլը, «Օրուան բեմադրիչն ու գլխավոր դերակատարը՝ Պերճ Ֆազլեան, թրծուած երկար տարիներու իր բեմական գործնէութեամբ, ... վերջին տարիներուն ահա Մոնրեալի մէջ՝ «Հայ բեմ» թատերախումբով կը մնայ պատնէշի վրայ: Ու շրջապատուած երէց ու կրտսեր իր բեմընկերներով այժմ պատուով դուրս կուգայ «Օթելլո»-յի փորձաքարէն»²¹: Այնուհետև, խոսելով դերասանի մարմնավորած կերպարի մասին, հոդվածի հեղինակը գրում է. «Որոտացող ձայն, խորապէս ապրուած հոգեկան վերիվայրումներու պատկերացում, նրբօրէն կիրարկուած դիմախաղ, կատաղի, սարսափազդու աչքերու արտայայտութիւն, ցասում, աղաղակ, զղջումի ճիշտ, գալարում. այս բոլորը զարդարեցին դժուարին խաղարկութիւնը անոր», և ավելացնում՝ «Օթելլոյի շուրջն ի վեր, վարժ ու անսայթաք գնահատելի խաղարկութեամբ իրենց մասնակցութիւնը կը բերէին ... սիրող դերակատարներ»²²:

1984-ի փետրվարին Մոնրեալում կայացած ողբերգության հաջող ներկայացումները հիմք ծառայեցին, որ Մոնրեալի «Թեքեյան» մշակութային միության «Հայ բեմ» թատերախումբը հրավիրվի Կանադայի և ԱՄՆ-ի այլ հայաշատ քաղաքներ (Տորոնտո, Նյու Յորք, Դետրոյտ, Լոս Անջելես և այլն)՝ ներկայացնելու այդ թատերախաղը:

1984 թ. մայիսի 20-ին Տորոնտոյի Ակինֆորդ քոլեջի թատերասրահում «Հայ բեմ» թատերախումբը ներկայացրել է Շեքսպիրի «Օթելլոն»՝ Պ. Ֆազլյանի բեմադրությամբ: Դերասանների կազմը հիմնականում պահպանվել է, փոխվել էր միայն Դեզդեմոնայի դերակատարուհին: Դեզդեմոնայի կերպարը բավական համոզիչ մարմնավորել է Թալին Սվազլյանը, որն ընդամենը երեք շաբաթ առաջ էր միացել թատերախմբին: Այդ ներկայացման ակնանատեսը, հիմնականում դրական գնահատելով թատերախմբի (ինչպես դերասանական, այնպես էլ տեխնիկական կազմի) աշխատանքը և առաջարկելով «ամէն հայ անհատի, թատերասէր կամ անտարբեր, անպայման տեսնել այս «Օթելլո»-ն», միաժամանակ նկատում է. «Չորս գինուորներն (դերակատարներ՝ Նորայր Դարիբյան, Արտաշ Բոյաջյան, Վարուժ Արթուրյան

²⁰ Նույն տեղում:

²¹ **Դաւիթ Յ. Էվերեկլեան**, Պերճ Ֆազլեանի «Օթելլո»-ին առիթով, «Քուլիս», Կ. Պոլիս, 1 ապրիլի, № 895, 1984, էջ 24: Նույնը տե՛ս Դաւիթ Յ. Էվերեկլեան, Թատերական կեանքիս ճամբուն վրայ..., Լոս Անճելըս, 1989, էջ 121:

²² Նույն տեղում:

և Ռիչարդ Ջաքարյան - Ա. Բ.) ու երկու պահակները (դերակատարներ՝ Սարո թոշիկյան և Վարուժ Արթուրյան - Ա. Բ.) շատ թոյլ էին իրենց զինուորական կեցուածքին մէջ» իսկ Օննիկ Գալուստյանը Բրաբանցիոյի դերը կ'աղօտէր իր անելորդ ձեռքերու շարժումներով: Եթէ կարենայ ձեռնախաղերը մոռնալ, իր տիպարը, անելի համոզիչ պիտի ըլլայ:

Այսպիսով, փաստենք, որ Շէքսպիրը «հայացվել» և հայերեն բեմադրվել է սկսած դեռևս XIX դարի կեսերից: Ընդ որում, նրա ստեղծագործությունների հայերեն թարգմանությունները բավական հաջող են և հնչում են հարազատորեն: Այդ 150-ամյա ժամանակահատվածում աշխարհի տարբեր երկրների բեմերում բազմիցս հայերեն ներկայացվել են Շէքսպիրի տարբեր ստեղծագործություններ: Բայց, հավանաբար, առավել շատ ներկայացվել է «Օթելլոն»: Բսկ ինչո՞ւ: Այդ հարցին հետաքրքիր, միգուցե նաև ճշգրիտ պատասխան է տալիս հենց ինքը՝ Պերճ Ֆազլյանը. դա «պատահական չէ: Նախ դերասանի վարպետութեան կը կարօտի, երկրորդ՝ նիւթը շատ մօտիկ եղած է հայերու սրտին – սեւ մը ձերմակներուն մէջ, ինչպէս հայ մը օտարներուն մէջ, ահա՛ նմանութեան եզրը»²³:

Բսկ վերջում, հետադարձ հայացք նետելով սփյուռքահայ շնորհաշատ և բացառիկ բեմադրիչ-դերասան Պերճ Ֆազլյանի թատերական գործունեությանը, կարող ենք արձանագրել, որ եթե նա լռեցներ իր ազգային խիղճը և աշխատեր օտար թատրոններում (շեշտենք, որ այդ հնարավորությունը նա բազմիցս ունեցել է), միգուցե այսօր հասած լիներ միջազգային համբավի: Սակայն նա հիմնականում ծառայել է սփյուռքահայ թատրոնի զարգացմանը և, իր իսկ խոսքերով ասած, «եթէ այսօր Սփիւռքի տարածքին կան հայախօս թատրոնի ջահակիրներ, և եթէ գալիք սերունդներուն մէջ պիտի ըլլան բեմարուեստի երկրպագուներ», հավատում է, որ «այդ բոլորին մէջ» ինքն էլ ունի «թափուած պուտ մը քրտինք»²⁴: Պ. Ֆազլյանը համոզված է, որ «եթէ տարիներ ետք գտնուի գոնէ մէկ անձ, որ պահ մը յիշէ, թէ Պերճ Ֆազլեան անունով մէկը այս յոգնած աշխարհին վրայ ուզեր է պատգամել Շէքսպիրի, Մոլիերի, Չեխովի, Գոլտոնիի, Պարոնեանի, Շեհաստէի, Կոկոլի, Շանթի և տակաւին այլ մեծերու միտքերն ու խոհերը, - որոնք կարծես իր սեփական խոհերը ըլլային, - ահա այդ ատեն իրաւունքը պիտի ունենամ հաւատալու, թէ կրցեր եմ որպէս ՄԱՐԴ ապրիլ»²⁵: Մենք այսօր էլ, այլ ոչ թէ «տարիներ ետք», վստահաբար և աներկբայորեն կարող ենք պնդել, համոզված ենք ու հավատում, որ «Պերճ Ֆազլեան անունով մէկը այս յոգնած աշխարհին վրայ», անցնելով երկար ու դժվարին ճանապարհ, արդեն իսկ իր անմիջական հետքն է թողել սփյուռքահայ թատերական արվեստում:

²³ **Մրբունի Շաքարեան-Տէր Օհաննէսեան**, Թատերական գործունեության մը նոր հանգրուանի սեմին:

²⁴ **Պերճ Ֆազլեան**, Վրաններ պողոտաներու վրայ (Յուշագրութիւն), Անթիլիաս, 2004, էջ 352:

²⁵ Նույն տեղում:

**“ОТЕЛЛО” ШЕКСПИРА НА СЦЕНЕ АРМЯНСКОГО ТЕАТРА В
КАНАДЕ****БЕКАРЯН А.А.****Резюме**

В армянонаселенных городах Канады были созданы армянские любительские театральные труппы. В 1976 году известный армянский театальный деятель Перч Фазлян основал в Монреале армянскую театральную труппу “Ай бем” (“Армянская сцена”) культурного общества Текеян. Силами этой труппы в феврале 1984 года впервые в Канаде на армянском языке была поставлена трагедия Шекспира “Отелло”. Спектакль имел огромный успех как у армянских, так и иностранных зрителей.

Канадская периодика отметила высокий профессиональный уровень П. Фазляна (постановщика и исполнителя главной роли) и актеров-любителей. Труппа получала приглашения из разных армянонаселенных городов Канады и США, и везде спектакль шел с неизменным успехом.

**SHAKESPEARE’S “OTHELLO” ON THE STAGE OF THE ARMENIAN
THEATRE IN CANADA****A. BEKARYAN****Abstract**

Since their first days of settlement in Canada, Armenians have hosted various charity events and concerts in order to collect donations for the Armenian refugees, schools and hospitals and to unite the Armenians.

These events, despite their insignificant artistic value, had a great contribution to the upbringing of young Armenian generations and helped retain the ethnic identity in the Armenian colonies in Canada.

Later on, amateur Armenian theatre companies started operating in Canadian cities. In 1976, Perch Fazlyan, a famous Armenian playwright and critic, founded Armenian theatre company Hay Bem (Armenian Stage) of *Tekeyan Cultural Association* in Montreal. The company played Shakespeare’s *Othello* in February, 1984 for the first time in Armenian in Canada. The high quality of

the production and the acting started the history of the theatre in the Armenian Diaspora.

The press highlighted the enthusiasm with which both the Armenian and the foreign audience received the play, the professional acting of Perch Fazlyan (Othello), the leading actor and the producer, as well as other actors involved in the production.

The success of the play in Montreal had other Armenian-populated cities in the USA and Canada host the theatre company on their sites.